



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան

«28» 09 2020 թ N° 493 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 133-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի փետրվարի 19-ի «Չափման միջոցի ստուգաչափման կազմակերպման և իրականացման կարգը, ստուգաչափման դրոշմի արտատիպի պատկերները սահմանելու, ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2012 թվականի նոյեմբերի 29-ի N 1018-Ն հրամանում փոփոխություններ կատարելու և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի փետրվարի 14-ի N 104-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 133-Ն հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Հրամանի վերնագրում, 3-րդ կետի 2-րդ ենթակետում, և N 2 հավելվածի վերնագրում «արտատիպի» բառից հետո լրացնել «և բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակաչուն դրոշմի» բառերը:

2) Հրամանի N1 Հավելվածով հաստատված Ձև N 2-ում և Ձև N 3-ում «տնտեսական զարգացման և ներդրումների» բառերը փոխարինել «էկոնոմիկայի» բառով:

3) Հրամանի N1 Հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետում «արտատիպի» բառից հետո լրացնել «, բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակաչուն դրոշմի» բառերը:

4) Հրամանի N1 Հավելվածի 11-րդ կետի 2-րդ ենթակետի 1-ին պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

5) Հրամանի N1 Հավելվածի 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«23. ՉՄ կառուցվածքը պետք է ապահովի տեսանելի վայրում ստուգաչափման դրոշմի արտատիպը դնելու հնարավորություն: Եթե ՉՄ-ի կառուցվածքը կամ օգտագործման պայմանների յուրահատկությունները թույլ չեն տալիս ստուգաչափման դրոշմի արտատիպը անմիջապես դնել ՉՄ-ի վրա, ապա այն դրվում է անձնագրի վրա, իսկ այլ յուրահատկություններից ելնելով (ծավալով փոքր, ոչ ստանդարտ կառուցվածք կամ օգտագործման պայմաններ, յուրահատկություններ ունեցող, ստուգաչափման դրոշմի արտատիպ դնելու հնարավորություն չունեցող, նույնականացման կամ սերիական համար չունեցող.) ՉՄ-ի վրա փակցվում է բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակաչուն դրոշմ (N 2 հավելվածի Ձև 3-ով սահմանված) լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով և հաշվառվում է հաշվառման համար նախատեսված մատյանում»:

6) Հրամանի N1 Հավելվածի 24-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

7) Հրամանի N1 Հավելվածի 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25. Լիազորված կազմակերպության ստուգաչափողի կողմից ՉՄ ստուգաչափման, չափագիտական վկայագրման դրական արդյունքները առավելագույնը 10-օրյա ժամկետում (հայտատուի կողմից համապատասխան վճարման առկայության դեպքում) վավերացվում են սույն հրամանի N 2 հավելվածի Ձև N 1-ով սահմանված ստուգաչափման դրոշմի արտատիպով ՉՄ-ի կամ անձնագրի վրա և տրվում է սույն հավելվածի Ձև N 2-ով սահմանված ստուգաչափման վկայական:

Լիազորված կազմակերպության ստուգաչափողի կողմից սույն հրամանի 23-րդ կետով սահմանված՝ այլ յուրահատկություններ ունեցող ՉՄ ստուգաչափման, չափագիտական վկայագրման դրական արդյունքները առավելագույնը 10-օրյա ժամկետում (հայտատուի կողմից համապատասխան վճարման առկայության դեպքում) փակցվում է (վավերացվում է) սույն հրամանի N 2 հավելվածի Ձև N 3-ով սահմանված բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակաչուն դրոշմով»:

8) Հրամանի N1 Հավելվածի Ձև N 3-ում «ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ N__» տողից հետո լրացնել նոր տող՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՏՐՎԱԾ Է __»:

9) Հրամանի N1 Հավելվածի 8-րդ կետով հաստատված ստուգաչափման հայտի՝ Ձև N 1-ում «Վճարումը երաշխավորում ենք» բառերը փոխարինել «Վճարումը երաշխավորում ենք անկանխիկ» բառերով:

10) Հրամանի N1 Հավելվածի 30-րդ կետում «արտատիպը՝» բառը փոխարինել «արտատիպը կամ հեռացնում, հանում է բարձր պաշտպանվածության համարակալված

ինքնակազուն դրոշմը» բառերով և «սույն Հավելվածի» բառերը սոխարինել «N 1 հավելվածի» բառերով:

- 11) N 2 հավելվածի 8-րդ կետից հետո լրացնել նոր 9-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.
«9. Բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակազուն դրոշմը (Ձև 3-րդ) պետք է պարունակի՝

ա. Հայաստանի Հանրապետության հապավումը՝ «ՀՀ» կարմիր գույնով, որի աջ և ձախ կողմերը շրջագծված են եռագույնով,

բ. Լիազորված կազմակերպության պայմանական ձածկագիրը ԼԿ («Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի ռեպրում»՝ ՍՁԱՄ)՝ դրոշմի կիրառման տարեթվի վերնամասում և կապույտ գույնով,

գ. Դրոշմի կիրառման տարեթիվը դրոշմի կենտրոնում և նարնջագույն գույնով,

դ. Նույնականացման համար նախատեսված հերթական համարը՝ տարեթվի ստորին մասում մեկ տառի և չորս թվի պարզ համակցմամբ՝ սև գույնով,

ե. Դրոշմը՝ կլոր, շրջանի տրամագիծը 25 մմ, եռագույնի ներսից եզրագրված տարվա 12 ամիսների սև գույնի նշագրումով:

- 12) N 2 հավելվածով սահմանված Ձև N 2-ից հետո լրացնել նոր Ձև N 3-ով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ձև N 3

Բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակազուն դրոշմի արտատիպի պատկերը»



ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ